Հավելված

<< ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Վ. Ադամյանի անվան
միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի և
<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի
միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի
միասնական կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի
2022թ-ի մարտի 30-ի № 3 նիստի

Ձև

Մրցույթի հայտարարություն

<< ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի
տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2.2-րդ կետի համաձայն՝ << ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի և <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի միասնական կոլեգիալ կառավարման մարմնը՝ խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ << ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են << ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ում 2022 թվականի ապրիլի 18 -ից մինչև 2022 թ. մայիսի 6 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9 -ից մինչև ժամը 15:00 -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի մայիսի 23 -ին՝ ժամը 14 -ին, << ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ գ. Լանջաղբյուր, Խ. Աբովյան 23

Տեղեկությունների համար դիմել << ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի խորհրդի կողմից լիազորված անդամ Սոփեր Կարապետյանին

Հեռախոսահամարը՝ 099 717464, էլեկտրոնային հասցեն՝soper.karapetyan@mail.ru

Խորհրդի նիստը նախագահող՝ Հ. Մովսիսյան